ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գոյականի ուսուցումը ակտիվ մեթոդների կիրառմամբ

Կատարող՝ Էմմա Մսրյան

Շիրակավանի միջնակարգ դպրոց

հայոց լեզու և գրականություն

Ղեկավար՝ Կարինե Զիլֆիմյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....3

Գոյականի ուսուցումը ակտիվ մեթոդների կիրառմամբ:Ուսուցման ակտիվ մեթոդները …….....3

Գոյականը որպես խոսքի մաս.Գոյական անվան ուսուցումը.....5

Գոյականի իմաստային-քերականական խմբերը…….....7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....11

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…….....13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քանի որ ժամանակակից կրթական համակարգն ուղղված է ինտելեկտուալ, զարգացած անհատի ձևավորմանը, որը չի իրականանա առանց գրական, անթերի ու գրագետ խոսք ունենալու, այսօր շատ մանկավարժների կողմից մշակվում են (արդիական) ժամանակի հետ համահունչ մեթոդական միջոցներ ու եղանակներ, ըստ ուսուցման տարբեր օղակների առաջադրվել են ավելի մատչելի ու արդյունավետ ձևեր: Գոյականի ուսուցման հարցերին նվիրված նյութերից մենք կարող ենք առանձնացնել պրոֆ. Ա. Տեր-Գրիգորյանի, դոցենտ Ս.Գ. Խաչատրյանի, դոցենտ Ջ. Գյուլամիրյանի աշխատությունները, որոնք ուղղակիորեն կապվում են ուսուցման կազմակերպման, նրա նպատակայնության և արդյունավետության բարձրացման հետ:

ՈՒսուցման գլխավոր նպատակը դարձավ սովորեցնել սովորել: Աշխատանքում առաջադրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- քերականության տեղն ու դերը հայոց լեզվի ուսուցման համակարգում: ուսումնասիրել գոյական անվան ուսուցման մեթոդներն ու եղանակները,
- բացահայտել գոյականի առանձնահատկությունների ուսուցումը,
- նպաստել գոյականի ուսուցման միջոցով աշակերտների բանավո ևր գրավոր գրագետ, կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը:

Ուսուցման ընթացքում մեծ տեղ տալ գործնական աշխատանքների կատարմանը:

Գոյականի ուսուցումը ակտիվ մեթոդների կիրառմամբ:

Ուսուցման ակտիվ մեթոդները

Գոյականը ուսուցանելիս ուսուցիչը ուսուցման գործընթացը ակտիվացնելու համար պետք է կիրառի ոչ միայն ուսուցման ավանդական մեթոդներ, այլ նաև օգտագործի այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրակտիկ վարժություններն ու առաջադրանքները: Իհարկե, երբ ուսուցիչը կիրառում է ակտիվ մեթոդներ, աշակերտի մտածողությունը զարգանում է, նոր գիտելիք է ձեռք բերում, ինրպես նաև ձևավորվում է աշակերտի հետաքրքրությունները, հմտություններն ու կարողությունները: Սակայն ուսուցիչը պետք է հաշվի առնի, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է

պահանջում, և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: ՈՒսուցիչը դրանց հետ զուգահեռ պետք է կիրառի ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելն ու բացատրելը:

ՈՒսուցիչը ակտիվ մեթոդները պետք է կիրառի այն ժամանակ, երբ անհրաժեշտ է, որ զարգացնի աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:

Ակտիվ ուսուցման հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց աշակերտների միջև: Այսպիսով՝ ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ:

Ակտիվ ուսուցման մեթոդների նպատակն է աշակերտների մոտ ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած խնդրի լուծման համար : Ակտիվ ուսուցման մեթոդների կարևոր դրույթներից է նաև համախմբել դասի ընթացքում ձեռք բերած նոր գիտելիքները և կատարելագործել մասնագիտական հմտությունները: Շատ կարևոր է նաև , որ ուսուցիչը աշակերտներին ներգրավի ինքնուրույն իմացական գործունեության մեջ :

Խմբային պարապմունքների ժամանակ ուսուցիչը և աաշակերտները զբաղված են միևնույն առաջադրանքով և աշխատում են միևնույն ձևով: Բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Դա էլ ունի իր պրոբլեմը,քանի որ խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է: Դրա համար էլ ուսուցիչը խաղը և ուսումնական գործընթացը պետք է համատեղի :

Ակտիվ մեթոդները բարձրացնում են աշակերտների ճանաչողական ակտիվությունը, ինչպես նաև զարգացնում է խոսքը, հիշողությունն ու մտածողությունը:

ՈՒսուցիչը և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ և սովորողները պասիվ ուկնդիրներ չեն: Այստեղ արդեն ուսուցիչ-աշակերտ հավասար մակարդակի վրա են[1]:

ՈՒսումնական գործընթացում ուսուցիչը պետք է կարևոր տեղ հատկացնի տեսողականացմանը: Այսինքն՝ Տեսողականացման տակ աշակերտները պետք է հասկանան ուսումնական բովանդակության պատկերազարդումը ինչ-որ պատկերների միջոցով:

[1] Ուսուցման ակտիվ մեթոդներ, https://hy.wikipedia.org › wiki

Ասենք, օրինակ՝ անձնանիշ և իրանիշ գոյականներն անցնելիս, ուսուցիչը պետք է նկարները փակցնի գրատախտակին: Գրատախտակի մի անկյունում պետք է փակցնի մարդկանց նկարներ, իսկ մյուս անկյունում՝ առարկաների նկարներ, այդ թվում նաև կենդանիների նկարներ: Աշակերտները, որպեսզի ավելի լավ տարբերակեն, ուսուցիչը պետք է անձ ցույց տվող նկարների տակ գրատախտակին գրի <<ո՞վ, ովքե՞ր>> բառերը, իսկ իր ցույց տվող բառերի տակ՝ <<ի՞նչ, ինչե՞ր>> բառերը: Թվում է, թե դա տարրական դասարանի աշակերտին է վերաբերում, բայց, յոթերորդ դասարանի աշակերտները նույնպես դա կարող են շփոթել:

ՈՒսումնական այս գործընթացում ուսուցիչը պետք է օրինակներ բերի: Շատ կարևոր է, որ երբ աշակերտներին առաջադրանքներ են տալիս, տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա: Իհարկե, սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս:

Գոյականը որպես խոսքի մաս

Գոյական անվան ուսուցումը

Դեռևս տարրական դասարանից աշակերտները սովորել են , որ ո՞վ, ի՞նչ հարցերի միջոցով որոշում են առարկա ցույց տվող բառերը և այդպես էլ անվանում: Յոթերորդ դասարանում ուսումնասիրվելիք նյութի ծավալը և բովանդակությունը պայմանավորված են գոյական անվան, ինչպես նաև միջին տարիքի դպրոցականների տարիքային առանձնահատկություններով: Աշակերտներին օրինակների միջոցով ուսուցիչը բացատրում է , որ գոյական նշանակում է գոյություն ունեցող, իսկ այն բառը, որը ցույց է տալիս գոյություն ունեցող որևէ բան, կոչվում է գոյական անուն կամ գոյականին տրվող անուն, այսինքն՝ գոյականը առարկան է , իսկ գոյական անունը՝ այն բառը, որը ցույց է տալիս առարկան: Գոյական անվան խոսքի մասի կարգի մեջ մտնող բառերը ցույց են տալիս առարկայի հասկացողություն: *Գոյական* եզրույթը *գոյ* արմատից է, որը, նշանակում է «կա, է, գոյություն ունի»: Այսպիսով՝ ուսուցիչը ներկայացնում է ,որ **գոյական** են համարվում առարկա և առարկայական հասկացություններ ցույց տվող բառերը :Այս փուլում օգտագործել <<Մտագրոհ>> մեթոդը: Գրատախտակին երկու սյունակով ամրացնել նկարներ (դերասան, երեխա, ավտոմեքենա, ծառ, ջութակ, գնդակ) և գրել համապատասխան հարցը (ո՞վ է, ի՞նչ է) և առաջարկել այդ հարցերի

օգնությամբ պարզաբանել, թե ինչ են տեսնում յուրաքանչյուր նկարում: Առաջարկել որոշել՝ ինչ ընդհանրություն կա ընդհանուր հարց ունեցող բառերի միջև: Այնուհետև փակցնել հետևյալ պաստառը:

Գոյականի իմաստային-քերականական խմբերը

Ըստ բառիմաստային ընդհանրությունների և քերականական յուրահատկությունների՝ գոյականները բաժանվում են հետևյալ խմբերի՝

<u>Հասարակ և հատուկ գոյականներ</u>: ՈՒսուցիչը պետք է ներկայացնի , որ հասարակ գոյականները ցույց են տալիս արտաքին աշխարհի բազմաքանակ և բազմատեսակ առարկաներ՝ ընդհանրացված ու վերացարկված ձևով: Ինչպես մարդ, ուսուցիչ, ուսանող, բժիշկ, քաղաք, ծով, լեռ, գետ և այլն: Այնուհետև ներկայացնի , որ հատուկ անունները ցույց են տալիս միասեռ դասերի պատկանող առանձին, անհատական կամ մասնավոր առարկաներ, գեղարվեստական երկերի, գիտական աշխատությունների, հանդեսների, թերթերի, ամսագրերի, և այլ անվանումներ, ինչպես Վարդան, Անահիտ, Արշակ, Գնել, Բակունց, Արաքս, Սև ծով, Սևանա լիճ, Գեղամա լեռներ, «Մշակ», «Սամվել», «Գրական թերթ» և այլն:

Իսկ միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը կոչվում է հասարակ անուն: Օրինակ՝ մարդ , լեռ քաղաք , աշակերտ , սեղան և այլն :

Հատուկ անունները սովորաբար հոգնակի թվով չեն գործածվում: Լեզվի զարգացման ընթացքում բազմաթիվ հասարակ անուններ վերածվել են հատուկ անունների,

ինչպես՝ Մարտիկ, Վրեժ,Նվեր, Ավետիս, Մանուկ, Թոռնիկ, Իշխան, Գետաշեն, Գոհար և այլն: ՈՒսուցիչը գրատախտակին գծում է Т-աձև աղյուսակ , որի ձախ կողմում գրում

է <<հատուկ անուն>> բառը , իսկ աջ կողմում `<<հասարակ անուն>> : Երեխաները , ինքնուրույն աշխատանքի միջոցով , առանձին ներկայացնում են

աշխատանքը և գնահատվում կամ խրախուսվում :Այս թեման ուսուցանելիս կարելի է օգտագործել ինչպես ավանդական , այնպես էլ նոր ,ժամանակակից մեթոդներ, մեթոդական հնարներ , խմբային աշխատանք և т-աձև աղյուսակներ:

Աշակերտների ինքնուրույն ուսումնառության կարողություններ զարգացնելու առումով նպատակային է <<Հատուկ և հասարակ գոյականներ>> թեմայի ուսուցման առաջին փուլն իրականացնել ԽԻԿ համակարգով: Թեմայի վերաբերյալ աշակերտների նախկին գիտելիքները ակտիվացնելու նպատակով ուսուցիչը կիրառում է մտագրոհ մեթոդական հնարը: Մտագրոհի առարկան կարող է դառնալ ուսուցչի կողմից տրված հարցը, գծապատկերը, աղյուսակը, որոնք օգնում են ակտիվացնելու իմացածը: Օրինակ՝ կարելի է առաջադրել այսպիսի առաջադրանք. գոյականներ են. Հայաստան, պետություն, Ե. Չարենց, երգահան,Կոմիտաս, Վոլգա գետ<< Գևորգ Մարզպետունի>> պատմավեպ: Ինչու՞ դրանց մի մասը գրվում է մեծատառով: Այսպես աշակերտները ակտիվացնում են իրենց հիշողությունը:

Դասարանը բաժանում է խմբերի և նախապես պատրաստած քարտերը , որտեղ աշակերտները պետք է լրացնեն հատուկ անուններ:

Ախատանքն ավարտելուց հետո այն կունենա հետևյալ մոտավոր տեսքը:



Հատուկ գոյականների ուղղագրությունը: Գոյականի տեսակներն անցնելուց հետո առանձին դաս է հատկացվում հատուկ

անունների ուղղագրությանը: Այս թեման անցնելիս ուսուցիչը պետք է նկատիունենա ՀՀ լեզվի պետական տեսչության կողմից հաստատված հատուկ անունների գրության նոր կանոնները: Ուսուցիչը նշում է, որ հատուկ անունները կարող են լինել միաբաղադրիչ և

բազմաբաղադրիչ։ Այստեղ ավելի մեծ ուշադրություն է դարձվում բազմաբաղադրիչ հատուկ անունների ուղղագրությանը, որովհետև միաբաղադրիչների դեպքում ամեն ինչ պարզ է՝ գրվում են մեծատառերով։ Օրինակ՝ Հայկ, Անի, Վան, Կարինե և այլն։

Ուսուցիչն ասում է, որ մեկից ավելի բաղադրիչ ունեցող բառերն ունեն գրության 2 ենթատեսակ՝

1. բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով։

2. Միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով։

Անձնանիշ և իրանիշ գոյականներ: ՈՒսուցիչը այս թեման անցնելիս ներկայացնում է , որ անձ ցույց տվող գոյականները անձերի հատուկ և հասարակ անուններն են, ոչ անձ (իր) ցույց տվող գոյականներն են մյուս բոլոր գոյականները։ Անձի և իրի տարբերակումը կատարվում է նաև ըստ հարցական դերանունների հետ հարաբերակցության։ Անձ ցույց տվող գոյականները պատասխանում են *ո՞վ* հարցին, իսկ իր ցույց տվող գոյականները, այդ թվում կենդանիները՝ *ի՞նչ* հարցին։

Գոյականի թիվը: Թվի քերականական կարգը ցույց է տալիս առարկաների քանակը, թիվը, մեկ կամ մեկից ավել լինելը։ Ըստ այդմ `գոյական անուններն ունեն երկու թիվ՝ եզակի և հոգնակի։ <u>Եզակի թիվը</u> բառի ուղիղ ձևն է, ցույց է տալիս եզակի, մասնավոր առակա կամ տվյալ տեսակի առարկան ընդհանրապես, ինչպես՝ *ծառ*, *տղա*։ <u>Հոգնակի թիվը</u> ցույց է տալիս նույն տեսակի մեկից ավելի առարկաներ՝ *ծառեր*, *տղաներ*։ Ժամանակակից հայերենում հոգնակի թիվը կազմվում է **-եր, -ներ, -իկ, -ք** մասնիկներով, որոնցից ամենագործածականը -**եր** և -**ներ** վերջավորություններն են։

Միավանկ բառերին ավելանում է -**եր** վերջավորությունը, օրինակ՝ տներ, քարեր, սարեր, գյուղեր։

Առաջադրանք։ ՈՒսուցիչը տալիս է քարտային առաջադրանք.

Գրեք գոյականների թիվը, ապա տեսակը՝ իրանիշ են, թե՝ անձնանիշ:

Մահճակալից-եզակի- իրանիշ Բերանում- եզակի- իրանիշ

Տաբատով- եզակի- իրանիշ Սենյակի- եզակի- իրանիշ

Ոտքերին- հոգնակի- իրանիշ Պատերի- հոգնակի — իրանի

Հավաքական գոյականներ: Գոյականի իմաստային քերականական կարգերից են նաև հավաքական գոյականները։ Թեման անցնելիս ներկայացնում է ,որ դրանք ցույց են տալիս միատեսակ առարկաների ամբողջություն։ Այս խմբի գոյականները ձևով եզակի

են, բայց արտահայտում են տալիս հոգնակի թվի իմաստ, ինչպես՝ աշակերտություն, գյուղացիություն, ղեկավարություն։ Ձևով եզակի են, բայց համապատասխանաբար նշանակում են աշակերտներ, գյուղացիներ, ղեկավարներ և ստորոգյալի հետ համաձայնում են եզակի թվով՝աշակերտությունը հուզված է։

Հոլովի քերականական կարգը։ Հոլովը գոյականի (և գոյականական գործածություն ունեցող բառի) քերականական այն փոփոխությունն է, որով արտահայտվում է առարկայի տարբեր հարաբերություններ։ Ժամանակակից լեզվաբանությունը հոլովի իմաստը որոշում է նրա ոչ թե բոլոր կիրառությունների, այլ գլխավոր կիրառությունների հիման վրա։ Եվ քանի որ հոլովը առարկա ցույց տվող բառերի հարաբերություն է արտահայտում, նրա իմաստային կիրառությունների մեջ գլխավորը պետք է համարել ոչ թե պարագայական կամ հատկանշային կիրառությունները, այլ նրանք, որոնցում նա առարկա է ցույց տալիս (գործող կամ եղող, գործողության հետ կապված)։

Արդի հայագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ արևելահայերենի գոյականն ունի

7հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, գործիական, բացառական և ներգոյական : Այս վերջինից զուրկ է արևմտահայերենը։ Որոշ մասնագետներ գտնում են, որ գոյականն ունի միայն հինգ հոլով /հայցական հոլովը միացնում են ուղղական հոլովին, տրական հոլովը՝ սեռականին/։ Այս տեսակետն է ունեցել Մանուկ Աբեղյանը, հոլովների որոշման հարցում հիմք ընդունելով հոլովների կազմությունը, արտաքին հնչյունական կողմը, գտնում է, որ ժամանակի ընթացքում սեռականը ձուլվել է տրականին, իսկ հայցականը ուղղականին, հետևաբար պետք է ընդունել հինգ հոլով, հետագայում՝ 7 հոլով։

ՈՒսուցիչը կատարում է <<Այց պատկերասրահ >> մեթոդը . դասարանը բաժանում է խմբերի , խմբերն էլ՝ համարների .1,2,3 : Յուրաքանչյուր համարի խումբ հավաքվում են մի սեղանի շուրջ: Ամեն մի խումբ մի հոլով է գրելու կամ պատրաստելու :Ամեն մի խումբ ներկայացնում է իր պաստառը : Պաստառները փակցվում են դասարանի պատերին : Յուրաքանչյուր խումբ կանգնում է մի պաստառի առջև , այդ պաստառի ստեղծմանը մասնակցած անդամը պատմում է նրա բովանդակությունը :Պատկերասրահում շրջելով յուրաքանչյուր պաստառի առաջ և իմանալով դրանց բովանդակությունը՝ ամբողջ դասարանը յուրացնում է թեման :

Հոլովում: Հոլովման տիպը որոշվում է բառի հոլովական փոփոխության ձևային հատկանիշով, այսինքն՝ ըստ այն բանի, թե հոլովումը ինչպիսի վերջավորությամբ է կատարվում: Ձևային տարբերությունների տեսակետից տարբեր հոլովներ տարբեր վիճակ են ներկայացնում: Օրինակ՝ ուղղականն ու ներգոյականն ունեն մեկ ձև, բացառականն ու գործիականը՝ երկու: Բառերի՝ այս կամ այն հոլովման պատկանելը հաճախ ունի իր ձևային կամ իմաստային հիմքը: Եվ հաշվի առնելով բառերի ձևի և իմաստի նկատմամբ ունեցած հարաբերությունը՝ տարբերվում են ընդհանրական, ձևային և իմաստային հոլովումներ: Ըստ կրած փոփոխությունների դիրքի և օրինաչափության՝ տարբերակում ենք <u>արտաքին</u> (Ի, Ու, Ան, Ց, Վա, Ոջ հոլվումներ), <u>ներքին</u> (Ա, Ո հոլովումներ), ինչպես նաև <u>այլաձև հոլովումներ</u>:

Գոյականի առումները: Որոշյալ և անորոշ գոյականներ: Այս թեման աշակերտներին հնարավորություն կտա. 1. ճանաչել հայերենի հոդերը 2.դրանք խոսքում ճիշտ կիրառել: Ուսուցիչը թեման սկսելուց առաջ բերում է բառեր և բառակապակցություններ երկու շարքով. Օրինակ՝

Անորոշ	**Որոշյալ**
ծառ	ծառը
Շատ տներ	գյուղի տները
Հոտավետ ծաղիկներ	պարտեզի ծաղիկները

Այս օրինակներից հետո ուսուցիչը աշակերտներից հարցնում է, թե ինչ տարբերություններ են նկատում: Աշակերտները պատասխանում են, որ 2-րդ շարքում գոյականների վերջում կա Ը ձայնավորը: Ուսուցիչն ասում է, որ այդ ը/ն/-ի լինել չլինելու հետ կապված գոյականները կարող են ցույց տալ ընդհանուր կամ կոնկրետ առարկա: Ասում է, որ առաջին շարքում եղած գոյականները ցույց են տալիս ընդհանուր առարկա՝ ընդհանրապես ծառ, տներ, ծաղիկներ, իսկ երկրորդ շարքում եղածները՝ կոնկրետ ծառը, տները, ծաղիկները, որոնք որոշակի են և ծանոթ իրենց:

Այս ամենից հետո ուսուցիչն ասում է, որ գոյականները ունենում են 2 առում՝ որոշյալ և անորոշ:

Անորոշ գոյականները որևէ վերջավորություն չեն ունենում, բառի ուղիղ ձևերն են։ Օր՝ տուն, շուն, հող, մառան և այլն։ Գոյականի անորոշ առումը արտահայտվում է նաև մի անորոշ հոդով՝ մի տուն, մի ծառ, մի մարդ և այլն։ Այնուհետև ասում է, որ անորոշ առում ունեցող գոյականները ցույց են տալիս խոսողին և խոսակցին անծանոթ առարկա։ Այնուհետև խոսում է գոյականի որոշյալ առման մասին։ Ուսուցիչն ասում է, որ որոշյալի կարգը արտահայտվում է ը կամ ն հոդերով։ Այս մասնիկները կոնկրետացնում են բառիմաստը։ Այս հոդերի հիմնական գործառույթն այն է, որ դրվելով գոյականների վրա՝ ցույց են տալիս, որ խոսքը խոսողի և խոսակցի համար որոշակի առարկայի մասին է։

ՈՒսուցիչը ոչ թե պատրաստի գիտելիքներ է տալիս աշակետին, այլ խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը։ Ա.Դիստերվերգն ասել է, որ վատ ուսուցիչը ճշմարտությունը մատուցում է, լավը՝ սովորեցնում գտնել այն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը, հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները։

- Ամբողջ աշխատանքի ընթացքում ձգտել ենք իրագործել այն նպատակներն ու խնդիրները, որոնք նախատեսել ենք ներածությունում։
- Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքները։
- ՈՒսումնասիրել ենք հիմնական դպրոցում քերականության ուսուցման, տվյալ դեպքում՝ ձևաբանական գիտելիքների ուսուցման վիճակը։
- Ներկայացրել ենք ձևաբանական գիտելիքների ուսուցումը՝ ԽԻԿ համակարգի մեթոդների և ուսուցման ակտիվ միջոցների կիրառմամբ։ ԽԻԿ համակարգի

մեթոդների կիրառման շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում:

- Ներկայացրել ենք քերականության տեղն ու դերը հայոց լեզվի ուսուցման համակարգում: Քերականական գիտելիքները հայոց լեզվի դասընթացի բաղկացուցիչ մասերից մեկն է և առանց դրա չի կարելի պատկերացնել լեզվի ուսուցումը:
- Ուսումնասիրել ենք քերականական գիտելիքների ուսուցման մեթոդներն ու եղանակները:
- Բացահայտել ենք գոյականի առանձնահատկությունների ուսուցումը:
- Նպաստել ենք գոյականի ուսուցման միջոցով աշակերտների բանավոր և գրավոր գրագետ, կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը՝ ուսուցման ընթացքում մեծ տեղ տալով գործնական աշխատանքների կատարմանը;

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Բաբայան Թ., Գոյականի դասավանդումը միջին դպրոցում:

Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989:

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ

Թվի քերականական կարգ – Վիքիպեդիա· https://hy.wikipedia.org › wiki

Ուսուցման ակտիվ մեթոդներ, https://hy.wikipedia.org › wiki.